



TerraFem
 08-643 05 10
 info@terrafem.org
 www.terrafem.org

Armeniska



Հարգելի կանայք և աղջիկներ,
 Ձեզ անապահով էք զգում:
 Կա՞րողյոք մեկը, ով իշխում, անարգում,
 ծեծում կամ սեռական բռնության է
 ենթարկում Ձեզ:
 Վախենում էք, որ Ձեզ ամուսնացնեն:
 Խնդրում ենք զանգահարել Տերրաֆեմ,
 որտեղ կստանաք աջակցություն Ձեր
 մայրենի լեզվով:

020-52 10 10

Որևէ մեկին ծեծելը հանցագործություն է համարվում

Ո՛չ Ձեր ամուսինը, ո՛չ քաղաքացիական ամուսինը, ո՛չ սիրած տղան, ո՛չ հայրը, ո՛չ եղբայրը, ո՛չ որդին իրավունք չունի կառավարելու, սահմանափակելու, սպառնալու, ծեծելու և սեռական բռնության ենթարկելու Ձեզ: Դա Ձեր մեղքը չէ: Մարդը պատասխանատվություն է կրում իր արարքների համար:

Դուք մենակ չեք

Շատ կանայք են ենթարկվում բռնության անկախ տարիքից, մասնագիտությունից, սոցիալական պատկանելիությունից, կրոնից և ազգությունից: Դուք չպետք է համակերպվեք ծեծված լինելու փաստի հետ: Պատմեք մեկին այն մասին, թե ինչի եք դուք ենթարկվում: Երբ լռությունը խախտված է, օգնության ճանապարհները բաց են:

Դուք չունե՞ք մշտական բնակության իրավունք (ՄԲԻ):

Դուք կարող եք օգնություն ստանալ նույնիսկ այն

դեպքում, երբ Ձեր ամուսինը սպառնում է Ձեզ և ասում, որ դուք կարտաքսվեք երկրից, եթե ամուսնու մասին հայտնեք ոստիկանությանը կամ որևէ մեկին ասեք, որ նա Ձեզ հետ վատ է վարվում: օ

Խնդրում ենք զանգահարել Տերրաֆեմ

Այստեղ դուք աջակցություն կստանաք Ձեր մայրենի լեզվով: Տերրաֆեմը կտրամադրի Ձեզ աջակցություն՝ հաղթահարելու բռնության և ճնշումների հետևանքով առաջացած վնասները: Տերրաֆեմը Ձեզ կտրամադրի իրավաբանական խորհրդատվություն, կնախապատրաստի Ձեր հանդիպումը ոստիկանության հետ և կաջակցի Ձեզ իրավական գործընթացներում: Տերրաֆեմը Ձեզ կարող է առաջարկել ապահով կացարանե համագործակցելով Սոցիալական ծառայությունների հետ: Ձեր զանգը չի ներառվի հեռախոսի վարձավճարի մեջ, և Ձեր հեռախոսահամարը չի գրանցվի: Ձեր զանգն անվճար է: Դուք կարող եք անանուն մնալ մեզ զանգահարելիս: Մենք պարտավոր ենք պահպանել մասնագիտական գաղտնիությունը: